6 փետրվարի 2014 թվականի N 109 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի N 720-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի ապրիլի 13-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձիլիզայի գյուղական համայնքի վարչական սահմանների նկարագիրը հաստատելու և Ձիլիզայի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» N 720-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) որոշման 2-րդ կետում՝

ա. «117.71» թիվը փոխարինել «117.75» թվով,

բ. «1.82» թիվը փոխարինել «1.86» թվով.

2) որոշման 3-րդ կետում՝

ա. «ա» ենթակետում «117.71» թիվը փոխարինել «117.75» թվով,

բ. «բ» ենթակետում «321.79» թիվը փոխարինել «321.75» թվով.

3) որոշման N 4 հավելվածում՝

ա. «Արդյունաբերության ընդերքոգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների» տողի «ընդամենը» սյունակում «1.82» թիվը փոխարինել «1.86» թվով,

բ. «Հատուկ նշանակության» տողի «Պետական սեփականություն հանդիսացող հողեր» սյունակում «0.04» թիվը փոխարինել «0» թվով,

գ. «Ընդամենը» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«	Ընդամենը	117.75	11.85	321.75	».

4) որոշման N 6 հավելվածում՝

ա. «009-006» տողից առաջ հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

«	009-003		0.04							սառնարանային տնտեսություն	»,

բ. «Արդյունաբերության ընդերքոգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների» սյունակի «Ընդամենը» տողում «1.82» թիվը փոխարինել «1.86» թվով.

5) որոշման N 7 հավելվածում՝

ա. հավելվածից հանել հետևյալ տողը.

«	009-003					0.04				հատուկ նշ. հող	»,

բ. «Հատուկ նշանակության հողերի» սյունակի «Ընդամենը» տողում «0.04» թիվը փոխարինել «0» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

14_0109